ԳԵՐՇ. Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊՍ. ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 45-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ ԱՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄՈՒՄ

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի հրավերով, հյուրաբար Արևմտյան թեմ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախկին լուսարարապետ Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Բարձրասպիճան հյուր հոգևորականը Լոս Անջելես ժամանեց 2001 թ. նոյեմբերի 21-ին և, թեմական առաջնորդ Սրբազան Հոր հրավերով, ուրբաթ և շաբաթ օրերին, նոյեմբերի 23-ին և 24-ին, մասնակցեց Հայց. Եկեղեցվո Երիտասարդաց Կազմակերպության տարեկան համագումարին, որը տեղի ունեցավ Գոսթա Մեսայի Ս. Աստվածածին եկեղեցում:

Կիրակի օրը, նոյեմբերի 25-ին, հյուր հոգևորականը առաջնորդ Սրբազան Հոր հրավերով պատարագեց և քարոզ խոսեց Գոսթա Մեսայի Ս. Աստվածածին եկեղեցում: Քարոզից առաջ առաջնորդ Սրբազան Հայրը հավատացյալներին ներկայացրեց պատարագիչ Սրբազան Հորը, ով այսքան երկար տարիներ ամենայն խղճմտությամբ ու նվիրումով ծառայել է Հայոց Եկեղեցուն:

Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը մի քանի անգամ այցելեց Առաջնորդարան, մտերմիկ զրույց ունեցավ առաջնորդ Սրբազան Հոր հետ և ծանոթացավ Առաջնորդարանի աշխատակազմին ու նրանց առօրյա աշխատանքներին:

Առաջնորդ Հոր հրավերով Հուսիկ Սրբազանը կիրակի օրը, դեկտեմբերի 2-ին, Ս. Պատարագ մատուցեց և քարոզ խոսեց Վեն Նայսի Ս. Պետրոս եկեղեցում: Եկեղեցու հոգևոր հովիվը՝ Արժ. Տ. Շնորհք քհն. Տեմիրճյանը, հավատացյալներին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիցագույն միաբան Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին և խոսեց Սրբազան Հոր կատարած երկարամյա նվիրյալ ծառայությունների մասին: Հյուր հոգևորականը ոգևորիչ քարոզ խոսեց և հուսալից տեղեկություններ հաղորդեց Մայր Հայրենիքից:

Բարձրասպիճան հյուր հոգևորականն իր խորին շնորհակալությունը հայտնեց առաջնորդ Սրբազան Հորը՝ ի պատիվ իրեն տրված այս ճաշի և իր ձեռնադրության 45-ամյակի նշման առթիվ, ինչպես նաև իր այցելության ընթացքում Սրբազան Հոր կողմից արժանացած բարձր ուշադրության և հյուրընկալության համար:

Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը երեքշաբթի օրը, դեկտեմբերի 4-ին, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ